ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Աբովյան 52ա Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52а 52a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5
ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2026 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ ԿԱՅՑԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ակ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչի ընտրություն:

Օրակարգի 1-ի հարցի Ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը նախ ներկայացրեց ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը, այնուհետև տեղեկացրեց, որ ակ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել է 1 թեկնածու՝ բ. գ. թ., դոցենտ Նվարդ Խաչատուրի Վարդանյանը: Ֆակուլտետը ստացել է թեկնածուի գործը, փաստաթղթերը ամբողջական են, նախապես տեղի է ունեցել նաև ամբիոնի նիստ, որտեղ կայացել է քվեարկություն: Ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները, ինչպես նաև թեկնածուի գործերը ներկայացնելու համար խոսքը տրվեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանին: Պրոֆ. Ա. Աբաջյանը ընթերցեց մրցութային հանձնաժողովի նիստի արձանագրությունը, որում մասնավորապես նշված էր.

ԼՍԵՑԻՆ - Ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմած թեկնածուի հարցը: Նիստը վարում էր հայ բանասիրության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- բ. գ. դ., պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Ս. Մուրադյանը, Ա. Մակարյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է միայն մեկ թեկնածու՝ ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Նվարդ Խաչատուրի Վարդանյանը: Ս.թ. փետրվարի 9-ին կայացած նիստում, որը վարել է հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ա. Մակարյանը, ամբիոնի 11 անդամներից մասնակցել է 10-ը: Ամբիոնը բաց քվեարկությամբ ընտրել է դոցենտ Նվարդ Վարդանյանին՝ 10 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ և երաշխավորել նրան մասնակցելու ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և

գրականության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին։:

Նշվեց, որ Ն. Վարդանյանը 2006 թվականից աշխատում է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնում, գիտակ, համեստ, սիրված դասախոս է: Հեքիաթագիտական մի քանի միջազգային գիտաժողովների համակազմակերպիչ է, արտերկրում մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների՝ օտար լեզվով ներկայացնելով գիտական զեկուցումներ: Նրա ղեկավարությամբ 2024-2025թթ. հաջողությամբ իրականացվել է «Արցախյան ավանդազրույցների գրառում, քարտեզագրում և շտեմարանավորում» դրամաշնորհային ծրագիրը, այժմ ընթացքի մեջ է «Ժողովրդական խաղատեսակները և դրանց բանահյուսական բաղադրիչները Լեռնային Ղարաբաղի ավանդական մշակույթում» խորագրով՝ ԲԿԳԿ դրամաշնորհային ծրագիրը (2025-2028):

Նա համահեղինակ է 2 կոլեկտիվ մենագրության, 20 գիտական հոդվածների, որոնցից չորսը լույս են տեսել բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում:

2025 թ. Ն. Վարդանյանը մասնակցել է դոցենտի կոչման համար նոր ընթացակարգով հայտարարված մրցույթին և ֆակուլտետի գիտխորհրդում անցկացված փակ քվեարկության արդյունքներով 5 տարով ընտրվել այդ պաշտոնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ - Հիմք ընդունելով վերոգրյալները՝ մրցութային հանձնաժողովը որոշեց դոցենտ Նվարդ Խաչատուրի Վարդանյանին երաշխավորել մասնակցելու ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Այնուհետև ծրագրային ելույթի համար խոսքը տրվեց թեկնածուին։

Բ. գ. թ., դոցենտ Նվարդ Վարդանյանը իր ելույթում մասնավորապես նշեց.

Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնը ոչ միայն հայ բանասիրության ֆակուլտետի, այլև Երևանի պետական համալսարանի հնագույն ամբիոններից է և գործում է 1929թ.-ից: Ամբիոնը հիմնադրման օրվանից ղեկավարել են այնպիսի ճանաչված և հայտնի հայագետներ, ինչպիսիք են Արսեն Տերտերյանը, Մկրտիչ Մկրյանը, Հրանտ Թամրազյանը, Սամվել Մուրադյանը, Ալբերտ Մակարյանը: 2022թ.-ից ամբիոնն ընդլայնել է գործունեությունը՝ իր կազմում ընդգրկելով նաև գրականության տեսության և քննադատության ամբիոնը, որը ևս իր հերթին հիմնադրել և ղեկավարել են իրենց գործին նվիրյալ գիտնականներ Էդվարդ Ջրբաշյանը, Հենրիկ Էդոյանը, Ժենյա Քալանթարյանը, Աշխեն Ջրբաշյանը:

Ամբիոնն ունի արդեն իսկ ձևավորված հարուստ ավանդույթ և անցած երկար ուղի: Տարիներ ի վեր եղել է հայագիտության խոշոր կենտրոն, ուր դասավանդել են ականավոր հայագետներ, ստեղծվել են կարևոր գիտական աշխատանքներ: Շատ կարևոր է պահպանել այդ ավանդույթները, դրանց հիմքի վրա ձևավորել նորերը, նպաստել նորարարությանը՝ միևնույն ժամանակ ցանկացած նորարարություն բխեցնելով հայագիտության շահերից և ազգային արժեհամակարգից:

Ամբիոնի հետագա գործունեության կազմակերպման հարցում կարևորում եմ հետևյալ աշխատանքների հետևողական իրագործումը:

1. Նպաստել ամբիոնի գործունեության ոլորտների՝ *հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին և միջնադարյան գրականություն, հայ նոր գրականություն, գրականության տեսություն, հայ գրականագիտության պատմություն,* զարգացմանը թե՛ կրթական ծրագրերի բարելավման, թե՛ գիտական ուղղություններին համապատասխան գործունեության ծավալման առումով:
2. Դասական առարկաների դասավանդումը պահպանելով որպես հիմնասյունային՝ միևնույն ժամանակ փորձել մասնագիտությունը գրավիչ դարձնել՝ կիրառություն ենթադրող, գրականությունը միջմշակութային կապերի մեջ դիտարկող առարկաներ և կրթական ծրագրեր ներմուծելով:
3. Նպաստել երիտասարդ կադրերի պատրաստմանը, առողջ և բնականոն սերնդափոխության ապահովմանը:
4. Նպաստել գիտահետազոտական աշխատանքների զարգացմանը՝ ձևավորելով թիմային աշխատանքային խմբեր՝ ինչպես ներամբիոնային, այնպել էլ այլ մասնագիտական ոլորտների հետ միջգիտակարգային կապեր ստեղծելով (գրականություն և լեզու, մշակույթ, հոգեբանություն և այլն): Սրանով մենք ոչ միայն կարձագանքենք ժամանակի պահանջներին, այլև դուրս կբերենք մեր մասնագիտությունը նեղ շրջանակներից՝ հարուստ դաշտի մեջ դնելով:
5. Նպաստել ամբիոնի աշխատակիցների ՄԳԾ հրատարակություններին, որին կարող է նպաստել նաև ավագ և կրտսեր սերունդների համագործակցային միջավայրի ձևավորումը, համագործակցություն, որից կարող են շահել երկու կողմերը ևս: Ավագները կլինեն փորձի փոխանցող, կրտսերները՝ ժամանակակից հմտություններին տիրապետող:
6. Փորձել ամբիոնում իրականացնել գիտական ծրագրեր, համագործակցել դրամաշնորհներ տրամադրող կառույցների հետ՝ դիմելով և հայտեր ներկայացնելով:
7. Կազմակերպել գիտական սեմինարներ ամիսը մեկ անգամ, փորձել հնարավորինս լայն լսարան ընդգրկել՝ ամբիոնը դարձնելով գիտական կենտրոն:
8. Նպաստել միջազգային համագործակցությանը, կապեր հաստատել տարբեր երկրների համալսարանների հայագիտական կենտրոնների, ոլորտի հայ և օտարազգի հեղինակավոր մասնագետների հետ, ինչը կնպաստի նաև համատեղ ծրագրերի և գիտաժողովների իրականացմանը:
9. Կազմակերպել ամբիոնի ուղղություններին համապատասխանող ոլորտներին վերաբերող տեղական և միջազգային գիտաժողովներ, նպաստել գիտաժողովի նյութերի հրատարակությանը:
10. Շարունակել «Բանահավաքչական ակումբի» գործունեությունը, որը ֆակուլտետում հիմնադրվել է 2021թ-ից, սակայն ավելի ակտիվ գործունեություն ծավալել է 2024-25թթ. ԵՊՀ ներքին դրամաշնորհի շրջանակներում:

Այս բոլոր աշխատանքների գլխավոր նախապայմանը ջերմ մարդկային փոխհարաբերություններն են, որոնք ձևավորված են ամբիոնում, և որոնց հետագա ավելի ջերմացմանը սիրով պիտի նպաստեմ: Ցանկացած դժվարություն հաղթահարելի է միասնության և փոխըմբռնման պայմաններում:

Այնուհետև, ըստ ընթացակարգի, սկսվեցին ելույթները։

Բ. գ. դ., պրոֆեսոր Ա. Մակարյանը իր խոսքում նշեց, որ դոցենտ Ն. Վարդանյանը ունի գիտական, մանկավարժական, մարդկային օրինակելի հատկանիշներ, որոնց շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների համակրանքը։

Բ. գ. դ., պրոֆեսոր Ա. Աբաջյանը ևս նշեց, որ արդեն տարիներ ամբիոնի դոցենտի պաշտոնում աշխատող Ն. Վարդանյանը իրեն դրսևորել է որպես դասախոսական գործի լավագույն կազմակերպիչ՝ ծավալելով նաև բեղուն գիտական գործունեություն։

Բ. գ. դ., պրոֆեսոր Ժ. Քալանթարյանն էլ նշեց, որ բացի լավ գիտնական ու դասախոս լինելուց, Ն. Վարդանյանը նաև հանրապետությունում ընդունված և հայտնի բանահյուսագետ է։

Բ. գ. թ., դոցենտ Վ. Պետրոսյանը ևս իր խոսքում բարձր գնահատեց Ն. Վարդանյանի գիտական, կազմակերպչական և մանկավարժական հատկանիշները՝ կոչ անելով քվեարկել թեկնածուի օգտին։

Ելույթներից հետո, համաձայն ընթացակարգի, փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Արամ Խաչատրյան – նախագահ
2. Մանուկ Ֆալակյան
3. Ալվարդ Կոշկակարյան

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ, բ. գ. թ. Արամ Խաչատրյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա են եղել և քվեարկությանը մասնակցել են 29-ը։

Բաժանվել է 29 քվեաթերթիկ։

Քվեատուփում եղել է 29 քվեաթերթիկ։

Քվեարկությանն արդյունքներն են՝

Հ/Հ	Թեկնածուի ազգանուն, անուն, հայրանուն	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
1.	Վարդանյան Նվարդ Խաչատուրի	27	0	2

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ 2։

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բ. գ. թ., դոցենտ Նվարդ Խաչատուրի Վարդանյանին ընտրված համարել ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչի պաշտոնում։

2. Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ հաստատելու ֆակուլտետի գիտխորհրդի քվեարկության արդյունքները, և խնդրել ռեկտորին, գործող կարգի համաձայն, ընտրված թեկնածուի հետ կնքել աշխատանքային պայմանագիր։

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ